

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, և նպատակ ունենալով խթանել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի՝ սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց, համագործակցության լիարժեք կայացումը, հետագա զարգացումն ու գործընկերային հարաբերությունների ձևավորումը, առաջնահերթ թիրախավորելով աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը.

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի սոցիալական աջակցության Վայքի տարածքային գործակալությունը համագործակցության է հրավիրում Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում գործող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց, որոնք՝ միանալով սոցիալական համագործակցության համաձայնագրին, հայտնում են իրենց համաձայնությունը հետևյալի մասին՝

գործել Համաձայնագրի նպատակներին և սոցիալական աջակցության սկզբունքներին համապատասխան, գործադրել լավագույն ջանքերը Համաձայնագրում և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված դրույթներն իրագործելու համար:

Համաձայնագրին միանալու մասին սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների պաշտոնական գրությունները, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմումները, ներկայացվում են սոցիալական աջակցության Վայքի տարածքային գործակալություն, որում նշվում է Համաձայնագրին ամբողջությամբ կամ վերապահումով միանալու մասին: /հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, ք.Վայք Շահումյան 14, հեռախոս 028221363

Համաձայնագրին նախկինում միացած կամ նոր միացող կազմակերպություններին, ֆիզիկական անձանց խնդրվում է ներկայացնել պաշտոնական գրություն, համաձայն կից ներկայացված օրնակեյի ձևի մինչև 2020թ. Մարտի 10-ը:

Վայքի ՍԱՏԳ-ի պետ՝



Ա.Մարգարյան

Օրինակելի ձև սոցիալական համագործակցությանը մասնակցելու համար պաշտոնական գրության

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
Վայքիի ՍԱՏԳ պետ պարոն Ա.Մարգարյանին**

Հայտնում ենք Ձեզ, որ ծանոթացել ենք ՀՀ Վայոց ձորի Վայքիի ՍԱՏԳ-ի կողմից նախաձեռնած «Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին» և ողջունում ենք Վայքիի տարածաշրջանում սոցիալական աջակցության միասնական ցանց ստեղծելու գաղափարը: Համաձայնագրում արտահայտված նպատակներն ու սկզբունքները համահունչ են նաև մեր կազմակերպության առաքելությանը:

Պատրաստակամ ենք համագործակցել և սոցիալական ոլորտում համատեղ լուծումներ տալ այն խնդիրներին, որոնք պահանջում են համատեղ և ամենօրյա աշխատանք:

Ընդունեք սույն գրությունը մեր կազմակերպության կողմից որպես «Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին» միանալու պաշտոնական համաձայնություն:

ա. Կազմակերպության անվանումը \_\_\_\_\_

բ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման օրը, ամիսը, տարին, գրանցման համարը \_\_\_\_\_

գ. փաստացի գործունեության հասցեն, \_\_\_\_\_

դ. ներկայացուցչի ազգանունը, անունը \_\_\_\_\_

ե. իրականացված(վող) ծրագրերը. \_\_\_\_\_

Ղեկավար՝

/ անուն, ազգանուն/